ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

24.12.2018թ. N 02/16.4/6371-18

<<Վանարխ>> սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերության տնօրեն
պարոն Ավետիք ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան

<<ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկի (այսուհետ՝ Կոմիտե) և <<Վանարխ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2018 թվականի մայիսի 17-ին կնքվել է Երևանի թիվ 50 հիմնական դպրոցի վերակառուցման նախագծահետազոտական աշխատանքների ձեռքբերման N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/4 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Հիմք ընդունելով Պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված առաջարկությունը և Պայմանագրի 2.1.3 կետը՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեն 2018 թվականի դեկտեմբերի 24-ից միակողմանի լուծում է Պայմանագիրը՝ 2 420 000 (երկու միլիոն չորս հարյուր քսան հազար) ՀՀ դրամի չափով:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի՝ Պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ ծանուցումը սահմանված կարգով կտեղադրվի gnumner.am կայքում:

Հարգանքով՝

Recoverable Signature

X

ԱՐԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Signed by: MKRTCHIAN ARAM 2707650080

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և
հաշվապահական հաշվառման վարչություն. Աշոտ Բաբայան
Հեռ: 011621727